ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

7 հուլիս, 2023 թվականի № 46-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի № 10-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը և Ընկերության գործադիր տնօրենի կողմից 2023 թվականի հունիսի 21-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված № Ռ/23 01-51 գրությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Հաստատել Ընկերության ղեկավար պաշտոն չզբաղեցնող աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:
3. Սահմանել, որ Ընկերության և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրում կարող են ներառվել նաև կիրառելի օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի հունվարի 25-ի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» № 10-Լ որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 31-ին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

7 հուլիս, 2023 թվականի

ք. Երևան